



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2016 թվականի

թիվ 41

քաղ. Մոսկվա

Կարանտինային բուսասանիտարական միջոցառումների լաբորատոր ապահովման կարգը հաստատելու մասին

«Սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների կիրառման մասին» արձանագրության 24-րդ կետին («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 12 հավելված) եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 18-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝ Կարանտինային բուսասանիտարական միջոցառումների լաբորատոր ապահովման կարգը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի «Կարանտինային բուսասանիտարական միասնական

պահանջները հաստատելու մասին» որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

S. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի մայիսի 10-ի
թիվ 41 որոշմամբ

ԿԱՐԳ

կարանտինային բուսասանիտարական միջոցառումների լաբորատոր ապահովման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կարգը մշակվել է «Սանիտարական, անասնաբուժասանիտարական եւ կարանտինային բուսասանիտարական միջոցառումների կիրառման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 12 հավելված) 24-րդ կետին համապատասխան եւ դրանով սահմանվում են կարանտինային բուսասանիտարական միջոցառումների լաբորատոր ապահովման կանոնները:

2. Սույն Կարգը կիրառվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ բույսերի կարանտինի ոլորտում լիազորված մարմինների (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետություններ, լիազորված մարմիններ) եւ կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաների կողմից:

3. Սույն Կարգի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«կարանտինային բուսասանիտարական փորձաքննություն»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) նմուշների (փորձանմուշների), կարանտինային օբյեկտների եւ կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմների հետազոտության ու կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) կարանտինային բուսասանիտարական վիճակի մասին եզրակացության տրամադրման համալիր ընթացակարգեր.

«կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաներ»՝ փորձագիտական կազմակերպություններ, որոնք համարվում են լիազորված մարմնի կառուցվածքային ստորաբաժանումներ կամ լիազորված մարմնին ենթակա կազմակերպություններ, ինչպես նաեւ այլ կազմակերպություններ, որոնք բույսերի կարանտինի ոլորտում հետազոտություններ կատարելու համար հավատարմագրված (ատեստավորված) եւ (կամ) լիազորված են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ունեն կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) նմուշների (փորձանմուշների) կարանտինային բուսասանիտարական վիճակի հետազոտություններ անցկացնելու համար անհրաժեշտ որակավորում ունեցող մասնագետներ եւ տեխնիկական միջոցներ.

«կարանտինային բուսասանիտարական միջոցառումների լաբորատոր ապահովում»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) նմուշների (փորձանմուշների), կարանտինային օբյեկտների ու կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմների ընտրության եւ շրջանառության,

նշված նմուշների (փորձանմուշների) կարանտինային բուսասանիտարական փորձաքննության անցկացման, կարանտինային բուսասանիտարական փորձաքննության արդյունքների փաստաթղթավորման, կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաների գործունեության համար տեղեկատվական, նյութատեխնիկական եւ գիտամեթոդական ապահովման համալիր ընթացակարգեր:

Սույն Կարգում օգտագործվող մյուս հասկացությունները կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով ու «Բույսերի կարանտինի եւ պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիայով (քաղ. Հռոմ, 1951 թվական) սահմանված իմաստներով:

II. Կարանտինային բուսասանիտարական միջոցառումների
լաբորատոր ապահովումը կազմակերպելու հիմնական սկզբունքները

4. Կարանտինային բուսասանիտարական միջոցառումների լաբորատոր ապահովումը կազմակերպելու հիմնական սկզբունքները հետեւյալն են՝

ա) կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաների տեղակայման օպտիմալացում եւ համալրում.

բ) կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաների՝ կարանտինային բուսասանիտարական փորձաքննություն իրականացնող որակավորված անձնակազմով համալրում, եւ դրա պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացում.

գ) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) (փորձանմուշների), կարանտինային օբյեկտների կամ կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմների նմուշների (այսուհետ՝ նմուշներ (փորձանմուշներ)) ծածկագրման համակարգի ներդրում՝ նմուշները (փորձանմուշները) գաղտնի փոխելու եւ (կամ)

հաշվառման կամ այլ փաստաթղթերում դրանց մասին գրառումները խեղաթյուրելու հնարավորությունը բացառելու, ինչպես նաև կարանտինային բուսասանիտարական փորձաքննության ստացված արդյունքների օբյեկտիվությունն ու անկողմնակալությունն ապահովելու համար.

դ) նմուշների (փորձանմուշների) հետազոտությունների մեթոդների (մեթոդիկաների)՝ բուսասանիտարական միջոցառումների վերաբերյալ միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտների (ախտորոշման արձանագրությունների) հետ ներդաշնակեցում.

ե) աշխատանքում նորագույն մշակման էքսպրես մեթոդները կիրառելու միջոցով կարանտինային բուսասանիտարական փորձաքննության արդյունքների ստացման օպերատիվության ապահովում.

զ) կարանտինային բուսասանիտարական փորձաքննություն անցկացնելու ընթացքում կարանտինային օբյեկտների եւ կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմների տարածման բացառում.

է) կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաների միջեւ տեղեկատվական փոխգործակցության ապահովում:

III. Կարանտինային բուսասանիտարական միջոցների լաբորատոր ապահովման կազմակերպումը

5. Կարանտինային բուսասանիտարական միջոցառումների լաբորատոր ապահովումը ներառում է՝

ա) նմուշների (փորձանմուշների) շրջանառություն (լիազորված մարմնի կողմից՝ կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիա դրանց փոխանցումը եւ տվյալ լաբորատորիայում դրանց տեղափոխումը).

բ) նմուշների (փորձանմուշների) կարանտինային բուսասանիտարական փորձաքննության անցկացում՝ բուսասանիտարական միջոցառումների

վերաբերյալ միջազգային եւ տարածաշրջանային ստանդարտների (ախտորոշման արձանագրությունների) հետ ներդաշնակեցված մեթոդների (մեթոդիկաների) կամ ստանդարտների կիրառմամբ.

գ) լիազորված մարմնի պաշտոնատար անձին կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիայի աշխատակցի կողմից՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքի) կարանտինային բուսասանիտարական վիճակի մասին եզրակացության ներկայացում.

դ) լիազորված մարմնի կողմից իրականացվող՝ կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաների տեղեկատվական, նյութատեխնիկական եւ գիտամեթոդական ապահովում:

6. Կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաները տեղակայվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով ներմուծվող եւ տեղափոխվող կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) տեսակը եւ ծավալը, այն անդամ պետության վարչատարածքային միավորի տարածքի կարանտինային բուսասանիտարական վիճակը, որում տեղակայված են այդպիսի լաբորատորիաներ:

7. Անցկացվող կարանտինային բուսասանիտարական փորձաքննությունների տեսակից եւ ծավալից կախված՝ կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիայում օգտագործվում են ախտորոշման համապատասխան մեթոդներ, որոշվում են անհրաժեշտ շինությունների եւ սարքավորումների քանակն ու նշանակությունը, ձեւավորվում է որակավորված անձնակազմ, ապահովվում է սարքավորումների ստուգումը, վարվում է կատարվող աշխատանքների որակի վերահսկողության համակարգ:

8. Այն կարանտինային բուսասանիտարական փորձաքննությունները, որոնցով նախատեսվում է անցկացնել նմուշների (փորձանմուշների) միջատաբանական, սնկաբանական, մանրէաբանական, վիրուսաբանական, նեմատոլոգիական եւ մոլախոտաբանական հետազոտություններ, անցկացվում են 1-ին հավելվածով նախատեսված ժամկետների համաձայն:

IV. Նմուշների (փորձանմուշների) ընտրությունը եւ շրջանառությունը

9. Նմուշների (փորձանմուշների) ընտրությունն իրականացվում է լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից եւ (կամ) լիազորված մարմնի որոշմամբ՝ կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիայի մասնագետների կողմից:

10. Կարանտինային բուսասանիտարական փորձաքննության անցկացման համար ուղարկվող ընտրված նմուշները (փորձանմուշները) փաթեթավորվում եւ կնքվում են այնպիսի եղանակով, որով մինչեւ նշված փորձաքննություն իրականացնելն ապահովվում է դրանց պահպանվածությունը: Կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիա ստացվելիս նմուշները (փորձանմուշները) ապանձնավորվում են, դրանց մասին տվյալները, մինչ կարանտինային բուսասանիտարական փորձաքննություն անցկացնելը, ծածկագրվում են անհատական համարների տրամադրմամբ: Նմուշների (փորձանմուշների) ծածկագրման համակարգով պետք է բացառվի նմուշները (փորձանմուշները) գաղտնի փոխելու եւ (կամ) հաշվառման կամ այլ փաստաթղթերում դրանց մասին գրառումները խեղաթյուրելու հնարավորությունը, ինչպես նաեւ ապահովվի կարանտինային բուսասանիտարական փորձաքննության ստացված արդյունքների օբյեկտիվությունը եւ անկողմնակալությունը: Նմուշների (փորձանմուշների) մասին տեղեկությունների վերծանումն իրականացվում է կարանտինային բուսասանիտարական փորձաքննության ավարտին:

Ընտրված նմուշները (փորձանմուշները) փաթեթավորվում, կնքվում եւ տեղափոխվում են այնպիսի եղանակներով, որոնցով բացառվում է կարանտինային օբյեկտների եւ կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմների տարածումը:

11. Կարանտինային բուսասանիտարական փորձաքննություն անցկացնելու համար ուղարկվող նմուշները (փորձանմուշները) ուղեկցվում են համապատասխան տեղեկատվությամբ (պիտակով), որը հիմք է համարվում նմուշները (փորձանմուշները) կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիայում գրանցելու համար:

12. Կարանտինային բուսասանիտարական փորձաքննություն անցկացնելու համար ստացվող նմուշները (փորձանմուշները) պահպանվում են այնպիսի պայմաններում, որոնցով բացառվում է դրանք գաղտնի փոխելու եւ կարանտինային օբյեկտներով ու կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմներով երկրորդ անգամ վարակվելու (ախտահարվելու) հնարավորությունը, ինչպես նաեւ կարանտինային օբյեկտների եւ կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմների՝ շրջակա միջավայր ներթափանցելու հնարավորությունը:

13. Նմուշները (փորձանմուշները) մինչ բոլոր անհրաժեշտ փորձաքննությունների ավարտն ու փաստաթղթերի տրամադրումը պահվում են կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիայում: Նմուշները (փորձանմուշները), անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, պահվում են կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիայում կամ մեկ այլ վայրում՝ պահպանելով սույն Կարգի 12-րդ կետում նշված պայմանները մինչեւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի պիտանիության ժամկետը լրանալը, սակայն կարանտինային բուսասանիտարական փորձաքննությունն ավարտելուց հետո 3 ամսից ոչ պակաս ժամկետով: Եթե կարանտինային օբյեկտի կամ կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմի նմուշը համարվում է գիտական արժեք

կամ անհրաժեշտ է դա՝ որպես տեղեկատվական կամ հավաքածուի (կոլեկցիոն) նյութ պահել, ապա դրա պահպանումը հնարավոր է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան կամ հնարավոր է դրա՝ փորձագիտական կազմակերպություն փոխանցումն այնպիսի պայմաններում, որոնք կբացառեն դրա տարածման հնարավորությունը:

14. Նմուշների (փորձանմուշների) ոչնչացումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այնպիսի մեթոդների կիրառմամբ, որոնք բացառում են կարանտինային օբյեկտների տարածման հնարավորությունը:

V. Կարանտինային բուսասանիտարական փորձաքննության անցկացումը, դրա արդյունքների ձեւակերպումը եւ օգտագործումը

15. Կարանտինային բուսասանիտարական փորձաքննության անցկացման հիմնական նպատակներն են կարանտինային օբյեկտների եւ կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմների հայտնաբերումն ու նույնականացումը:

16. Նմուշների (փորձանմուշների) անալիզների արդյունքները ձեւակերպվում են լաբորատոր հետազոտության արձանագրության տեսքով, որը հիմք է համարվում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքի) կարանտինային բուսասանիտարական վիճակի մասին եզրակացությունը ձեւակերպելու համար:

17. Կարանտինային բուսասանիտարական փորձաքննության անցկացման արդյունքների հիման վրա կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիայի կողմից կազմվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքի) կարանտինային բուսասանիտարական վիճակի մասին եզրակացություն:

18. Ընտրությունը, գրանցումը եւ կարանտինային բուսասանիտարական փորձաքննության անցկացումը հաստատող փաստաթղթերը եւ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) կարանտինային բուսասանիտարական վիճակի մասին եզրակացությունը, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, կարանտինային բուսասանիտարական փորձաքննության ավարտից հետո 1 տարվա ընթացքում պահվում են կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիայում կամ մեկ այլ վայրում:

19. Կարանտինային բուսասանիտարական փորձաքննության արդյունքներն օգտագործվում են՝

ա) կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) կարանտինային բուսասանիտարական վիճակը պարզելիս.

բ) կարանտինային հսկողության վերցված օբյեկտների կարանտինային բուսասանիտարական վիճակը պարզելիս.

գ) Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական վիճակի դիտանցում իրականացնելիս.

դ) կարանտինային բուսասանիտարական հետազոտություններ անցկացնելիս.

ե) գիտական հետազոտություններ անցկացնելիս.

զ) բուսասանիտարական ռիսկի անալիզ անցկացնելիս.

է) բույսերի կարանտինի ապահովման այլ դեպքերում:

VI. Կարանտինային բուսասանիտարական (փորձարկման)

լաբորատորիաների տեղեկատվական ապահովումը

20. «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում՝ կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիայի պաշտոնական կայքում եւ (կամ) լիազորված մարմնի կայքում հրապարակվում է տվյալ լաբորատորիայի մասին հետեւյալ տեղեկատվությունը՝

ա) կոնտակտային տվյալները.

բ) կարանտինային օբյեկտների եւ կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմների ցանկը.

գ) կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիայում օգտագործվող՝ կարանտինային բուսասանիտարական փորձաքննությունների անցկացման մեթոդների ցանկը:

21. Կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաների միջեւ տեղեկատվական փոխգործակցությունն իրականացվում է հետեւյալ տեղեկատվության փոխանակմամբ՝

ա) կարանտինային օբյեկտների եւ կարգավորվող ոչ կարանտինային վնասակար օրգանիզմների հայտնաբերման ու նույնականացման օգտագործվող մեթոդներ եւ մեթոդիկաներ.

բ) լաբորատորիայի անձնակազմի որակավորման բարձրացում.

գ) կարանտինային բուսասանիտարական միջոցառումների լաբորատոր ապահովմանը վերաբերող այլ տեղեկատվություն:

VII. Կարանտինային բուսասանիտարական (փորձարկման)

լաբորատորիաների նյութատեխնիկական եւ

գիտամեթոդական ապահովումը

22. Կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, համալրվում են նյութական եւ տեխնիկական այնպիսի միջոցներով, որոնք անհրաժեշտ են ժամանակակից գիտատեխնիկական մակարդակով նմուշների (փորձանմուշների) կարանտինային բուսասանիտարական վիճակի հետազոտություն անցկացնելու համար, թույլ են տալիս ապահովել կարանտինային բուսասանիտարական փորձաքննությունների անցկացումն ու ճշգրիտ արդյունքների ստացումը՝ հաշվի առնելով կարանտինային բուսասանիտարական փորձաքննություններ անցկացնելու համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների եւ նյութերի տիպային ցանկը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

23. Կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիաների գիտամեթոդական ապահովումն իրականացվում է անդամ պետությունների գիտահետազոտական կազմակերպությունների կողմից:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Կարանտինային բուսասանիտարական
միջոցառումների լաբորատոր
ապահովման կարգի

ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

նմուշների (փորձանմուշների) միջատաբանական,
անկաբանական, մանրէաբանական, վիրուսաբանական,
նեմատոլոգիական եւ մոլախոտաբանական հետազոտություններ
իրականացնելիս կարանտինային բուսասանիտարական
փորձաքննություններ անցկացնելու

| Հետազոտության մեթոդի անվանումը | Հետազոտության օբյեկտը | Անցկացման ժամկետը, աշխատանքային օրերի թիվը* |
|--------------------------------|-----------------------|---|
|--------------------------------|-----------------------|---|

I. Կարանտինային հսկողության վերցված նյութերի նմուշների (փորձանմուշների) միջատաբանական հետազոտություն

| | | |
|--|----------------------|---|
| 1. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) միջատների (հատվածոտանիների) առանձնացում | 1 նմուշ (փորձանմուշ) | 1 |
| 2. Ֆերմոնային կամ լուսային թակարդներից միջատների (հատվածոտանիների) առանձնացում | 1 թակարդ | 1 |
| 3. Սննդային խայծից, մաքրելու խոզանակներից միջատների (հատվածոտանիների) առանձնացում՝ մեխանիկական մեթոդով կամ մաղելով | 1 խայծ (խոզանակ) | 1 |
| 4. Սննդային խայծից, մաքրելու խոզանակներից միջատների (հատվածոտանիների) առանձնացում՝ ֆլոտացիայի մեթոդով | 1 խայծ (խոզանակ) | 1 |
| 5. Լուսային թակարդներից միջատների (հատվածոտանիների) առանձնացում | 1 թակարդ | 1 |

* Միեւնույն հետազոտությունում տարբեր մեթոդներ կիրառելիս անցկացման ժամկետները կարող են գումարվել: Անցկացման ժամկետները հաշվվում են նմուշները (փորձանմուշները) կարանտինային բուսասանիտարական (փորձարկման) լաբորատորիա ստացվելու պահից: Նմուշները աշխատանքային օրվա երկրորդ կեսին լաբորատորիա ստացվելու դեպքում՝ այդ օրը չի հաշվվում հետազոտության անցկացման ժամկետներում: Կարանտինային օբյեկտ հայտնաբերելու դեպքում մեթոդիկայով պայմանավորված՝ կարող են նշանակվել լրացուցիչ հետազոտություններ. անցկացման ժամկետները երկարաձգվում են մինչեւ ամբողջական նույնականացումը

| Հետազոտության մեթոդի անվանումը | Հետազոտության օբյեկտը | Անցկացման ժամկետը, աշխատանքային օրերի թիվը* |
|--|-----------------------|---|
| 6. Գաղտնի վարակվածության դեպքում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) միջատների (հատվածոտանիների) առանձնացում՝ ֆլուտացիայի, ներկման, լյումինեսցենցման, ռենտգենոսկոպիայի կամ աուդիոսկոպիայի մեթոդով | 1 նմուշ (փորձանմուշ) | 2 |
| 7. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) միջատների (հատվածոտանիների) առանձնացում՝ աճեցումն ավարտին հասցնելով (նույնականացման համար անհրաժեշտ փուլ հասցնելու համար) | 1 նմուշ (փորձանմուշ) | 30 |
| 8. Միջատների (հատվածոտանիների) նույնականացում՝ տեսողական եւ (կամ) մանրադիտման (միկրոսկոպիա) ու ձեւաչափության (մորֆոմետրիա) մեթոդով՝ առանց միկրոպատրաստուկի պատրաստման | 1 նույնականացում | 1 |
| 9. Միջատների (հատվածոտանիների) նույնականացում մանրադիտման ու ձեւաչափության մեթոդով՝ առանց միկրոպատրաստուկի պատրաստման | 1 նույնականացում | 2 |
| 10. Միջատների (հատվածոտանիների) նույնականացում՝ «դասական» ՊՇՌ-ի, FLASH-ՊՇՌ-ի, «իրական ժամանակում» ՊՇՌ-ի, ՊՇՌ-մոդիֆիկացիաներում պոլիմերազային շղթայական ռեակցիայի օգտագործմամբ՝ ուսումնասիրելով ռեստրիկցիոն ֆրագմենտների երկարության պոլիմորֆիզմը | 1 նույնականացում | 3 |
| 11. Միջատների (հատվածոտանիների) նույնականացում՝ ԴՆԹ-ի սեկվենավորման մեթոդով | 1 նույնականացում | 5 |
| II. Կարանտինային հսկողության վերցված նյութերի նմուշների (փորձանմուշների) սնկաբանական հետազոտություն | | |
| 12. Կարտոֆիլի պալարների նմուշներից (փորձանմուշներից) կարտոֆիլի քաղցկեղի հարուցիչների առանձնացում | 1 նմուշ (փորձանմուշ) | 1 |
| 13. Հողի նմուշներից (փորձանմուշներից) կարտոֆիլի քաղցկեղի հարուցիչների առանձնացում | 1 նմուշ (փորձանմուշ) | 2 |
| 14. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) սնկերի ու սնկանման օրգանիզմների առանձնացում՝ տեսողական մեթոդով | 1 նմուշ (փորձանմուշ) | 1 |
| 15. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) սնկերի ու սնկանման օրգանիզմների առանձնացում՝ խոնավ խցիկում կուլտիվացման մեթոդով | 1 նմուշ (փորձանմուշ) | 20 |
| 16. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) սնկերի ու սնկանման օրգանիզմների առանձնացում՝ սնուցող միջավայրում կուլտիվացման մեթոդով | 1 նմուշ (փորձանմուշ) | 20 |

| Հետազոտության մեթոդի անվանումը | Հետազոտության օբյեկտը | Անցկացման ժամկետը, աշխատանքային օրերի թիվը* |
|--|-----------------------|---|
| 17. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) սնկանման օրգանիզմների առանձնացում՝ բիոխայծի մեթոդով | 1 նմուշ (փորձանմուշ) | 20 |
| 18. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) սնկերի առանձնացում՝ սպորների լվացման եւ ցենտրիֆուգման մեթոդով | 1 նմուշ (փորձանմուշ) | 2 |
| 19. Մսկերի եւ սնկանման օրգանիզմների նույնականացում՝ մանրադիտման ու ձեւաչափության մեթոդով | 1 նույնականացում | 2 |
| 20. Մսկերի եւ սնկանման օրգանիզմների նույնականացում՝ «դասական» ՊՇՌ-ի, FLASH-ՊՇՌ-ի, «իրական ժամանակում» ՊՇՌ-ի, ՊՇՌ-ի մոդիֆիկացիաներում պոլիմերազային շղթայական ռեակցիայի օգտագործմամբ՝ ուսումնասիրելով ռեստրիկցիոն ֆրագմենտների երկարության պոլիմորֆիզմը | 1 նույնականացում | 3 |
| 21. Մսկերի եւ սնկանման օրգանիզմների նույնականացում՝ իմունաֆերմենտային անալիզի (ԻՖՍ) մեթոդով | 1 նույնականացում | 2 |
| 22. Մսկերի եւ սնկանման օրգանիզմների նույնականացում՝ ԴՆԹ-ի սեկվենավորման մեթոդով | 1 նույնականացում | 5 |
| 23. Մսկերի եւ սնկանման օրգանիզմների համար պաթոգենության թեստ | 1 նույնականացում | 60 |
| 24. Մսկերի (սնկանման օրգանիզմների) նույնականացում՝ զանգվածային սպեկտրաչափության մեթոդով | 1 նույնականացում | 1 |
| III. Կարանտինային հսկողության վերցված նյութերի նմուշների (փորձանմուշների) մանրէաբանական հետազոտություն | | |
| 25. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) մանրէների առանձնացում՝ տարանջատման բուֆերներում | 1 նմուշ (փորձանմուշ) | 2 |
| 26. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) մանրէների առանձնացում՝ սնուցող (այդ թվում՝ սելեկտիվ) միջավայրում կուլտիվացման մեթոդով | 1 նմուշ (փորձանմուշ) | 14 |
| 27. Մանրէների նույնականացում՝ կենսաքիմիական մեթոդով | 1 նույնականացում | 20 |
| 28. Մանրէների նույնականացում՝ կենսաբանական մեթոդով | 1 նույնականացում | 60 |
| 29. Մանրէների նույնականացում՝ իմունաֆլուորեսցենտային անալիզի (ԻՖ) մեթոդով | 1 նույնականացում | 1 |
| 30. Մանրէների նույնականացում՝ իմունաֆերմենտային անալիզի (ԻՖՍ) մեթոդով | 1 նույնականացում | 2 |
| 31. Մանրէների նույնականացում՝ «դասական» ՊՇՌ-ի, FLASH-ՊՇՌ-ի, «իրական ժամանակում» ՊՇՌ-ի, ՊՇՌ-ի մոդիֆիկացիաներում պոլիմերազային շղթայական ռեակցիայի օգտագործմամբ՝ ուսումնասիրելով ռեստրիկցիոն ֆրագմենտների երկարության պոլիմորֆիզմը | 1 նույնականացում | 3 |

| Հետազոտության մեթոդի անվանումը | Հետազոտության օբյեկտը | Անցկացման ժամկետը, աշխատանքային օրերի թիվը* |
|--|-----------------------|---|
| 32. Մանրէների նույնականացում՝ ԴՆԹ-ի սեկվենավորման մեթոդով | 1 նույնականացում | 5 |
| 33. Մանրէների նույնականացում՝ իմունաքրոմատագրման անալիզի (ԻՔԱ) մեթոդով | 1 նույնականացում | 1 |
| 34. Մանրէների նույնականացում՝ զանգվածային սպեկտրաչափության մեթոդով | 1 նույնականացում | 1 |
| 35. Մանրէների նույնականացում՝ ճարպաթթուների պրոֆիլի անալիզի մեթոդով | 1 նույնականացում | 2 |
| IV. Կարանտինային հսկողության վերցված նյութերի նմուշների (փորձանմուշների) վիրուսաբանական հետազոտություն | | |
| 36. Լուծամզուքում կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) վիրուսների, վիրոիդների եւ ֆիտոպլազմայի առանձնացում | 1 նմուշ (փորձանմուշ) | 2 |
| 37. Վիրուսների, վիրոիդների եւ ֆիտոպլազմայի նույնականացում՝ իմունաֆերմենտային անալիզի (ԻՖԱ) մեթոդով | 1 նույնականացում | 2 |
| 38. Վիրուսների, վիրոիդների եւ ֆիտոպլազմայի նույնականացում՝ «դասական» ՊՇՌ-ի, FLASH-ՊՇՌ-ի, «իրական ժամանակում» ՊՇՌ-ի, ՊՇՌ-ի մոդիֆիկացիաներում պոլիմերազային շղթայական ռեակցիայի օգտագործմամբ ուսումնասիրելով ռեստրիկցիոն ֆրագմենտների երկարության պոլիմորֆիզմը | 1 նույնականացում | 3 |
| 39. Վիրուսների, վիրոիդների եւ ֆիտոպլազմայի նույնականացում՝ ԴՆԹ-ի սեկվենավորման մեթոդով | 1 նույնականացում | 5 |
| 40. Վիրուսների, վիրոիդների եւ ֆիտոպլազմայի նույնականացում՝ ինդիկատոր բույսերի կենսաթեստի մեթոդով | 1 նույնականացում | 60 |
| V. Կարանտինային հսկողության վերցված նյութերի նմուշների (փորձանմուշների) նեմատոլոգիական հետազոտություն | | |
| 41. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) նեմատոդների առանձնացում՝ Բերմանի մեթոդով | 1 նմուշ (փորձանմուշ) | 2 |
| 42. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) նեմատոդների առանձնացում՝ ձագարի եւ ձագարային ֆլուտացման մեթոդով (այդ թվում՝ օգտագործելով ցիստոանջատիչ) | 1 նմուշ (փորձանմուշ) | 1 |
| 43. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) նեմատոդների առանձնացում՝ մեխանիկական մեթոդով | 1 նմուշ (փորձանմուշ) | 1 |
| 44. Նեմատոդների նույնականացում՝ մանրադիտման ու ձեւաչափության մեթոդով | 1 նույնականացում | 1 |

| Հետազոտության մեթոդի անվանումը | Հետազոտության օբյեկտը | Անցկացման ժամկետը, աշխատանքային օրերի թիվը* |
|--|-----------------------|---|
| 45. Նեմատոդների նույնականացում՝ «դասական» ՊՇՌ-ի, FLASH-ՊՇՌ-ի, «իրական ժամանակում» ՊՇՌ-ի, ՊՇՌ-ի մոդիֆիկացիաներում պոլիմերազային շղթայական ռեակցիայի օգտագործմամբ՝ ուսումնասիրելով ռեստրիկցիոն ֆրագմենտների երկարության պոլիմորֆիզմը | 1 նույնականացում | 3 |
| 46. Նեմատոդների նույնականացում՝ ԴՆԹ-ի սեկվենավորման մեթոդով | 1 նույնականացում | 5 |
| 47. Ցիստառաջացնող նեմատոդների կենսունակության որոշում՝ մանրադիտակային մեթոդով | 1 ցիստ | 1 |
| VI. Կարանտինային հսկողության վերցված նյութերի նմուշների (փորձանմուշների) մոլախոտաբանական հետազոտություն | | |
| 48. Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (նյութերի) նմուշից (փորձանմուշից) բույսերի սերմերի եւ (կամ) պտուղների առանձնացում՝ մեխանիկական մեթոդով կամ մաղելով | 1 նմուշ (փորձանմուշ) | 1 |
| 49. Հողի նմուշից (փորձանմուշից) բույսերի սերմերի եւ (կամ) պտուղների առանձնացում՝ լվացման մեթոդով | 1 նմուշ (փորձանմուշ) | 2 |
| 50. Բույսերի նույնականացում՝ տեսողական եւ (կամ) մանրադիտման ու ձեւաչափության մեթոդով՝ առանց միկրոպատրաստուկի պատրաստման | 1 նույնականացում | 1 |
| 51. Բույսերի նույնականացում՝ մանրադիտման ու ձեւաչափության մեթոդով՝ առանց միկրոպատրաստուկի պատրաստման | 1 նույնականացում | 2 |
| 52. Բույսերի նույնականացում՝ «դասական» ՊՇՌ-ի, FLASH-ՊՇՌ-ի, «իրական ժամանակում» ՊՇՌ-ի, ՊՇՌ-ի մոդիֆիկացիաներում պոլիմերազային շղթայական ռեակցիայի օգտագործմամբ՝ ուսումնասիրելով ռեստրիկցիոն ֆրագմենտների երկարության պոլիմորֆիզմը | 1 նույնականացում | 3 |
| 53. Բույսերի նույնականացում՝ ԴՆԹ-ի սեկվենավորման մեթոդով | 1 նույնականացում | 5 |
| 54. Բույսերի սերմերի կենսունակության որոշում՝ տետրազոլային մեթոդով | 1 հետազոտություն | 2 |
| 55. Բույսերի սերմերի կենսունակության որոշում՝ ներկման, պլազմոլիզի ուսումնասիրության եւ (կամ) լյումինեսցենտման մեթոդով | 1 հետազոտություն | 2 |
| 56. Բույսերի սերմերի կենսունակության որոշում՝ հսկողության մեթոդով (սերմերի ծլունակություն) | 1 հետազոտություն | 10 |

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2

Կարանտինային բուսասանիտարական
միջոցառումների լաբորատոր
ապահովման կարգի

ՏԻՊԱՅԻՆ ՑԱՆԿ

Կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ անցկացնելու
համար անհրաժեշտ լաբորատոր սարքավորումների եւ նյութերի

| Սարքավորումների եւ նյութերի անվանումը | Նշանակությունը |
|---|--|
| I. Միջատաբանական փորձաքննություն | |
| 1. Հիմնական սարքավորումները | |
| 1. Ձեռքի խոշորացույցների լրակազմ (2 x - 10 x) | նյութի նախնական զննության ժամանակ օգտագործում |
| 2. Ճակատի բինոկուլյար խոշորացույց | նմուշների վերլուծություն եւ ստուգում |
| 3. Տարածադիտական մանրադիտակ՝ ընդհանուր խոշորացումը՝ 80 x-ից ոչ պակաս, ֆոտոխցիկի միացման հնարավորությամբ: Օկուլյար միկրոմետրը պարտադիր է | միջատների եւ դրանց ֆրագմենտների ուսումնասիրություն, միկրոպատրաստուկների պատրաստում |
| 4. Մանրադիտակ՝ կենսաբանական, ուղղահայաց, ընդհանուր խոշորացումը՝ 1 000 x-ից ոչ պակաս, ֆոտոխցիկի միացման հնարավորությամբ եւ հետեյալ աշխատանքային ռեժիմներով՝ լուսավոր դաշտ, մութ դաշտ, փուլային հակադրություն: Օկուլյար միկրոմետրը պարտադիր է | միկրոպատրաստուկների ուսումնասիրություն |
| 5. Օբյեկտ-միկրոմետր | օկուլյար միկրոմետրի բաժանքի արժեքների չափում |
| 6. Կշեռքներ՝ լաբորատոր, էլեկտրական, 500 գ-ից ոչ պակաս կշռման սահմանաչափով եւ 0,01 գ-ից ոչ ավելի ընդհատությամբ | միկրոպատրաստուկների պատրաստման համար քիմիական ռեակտիվների կշռում |
| 7. Կոմբինացված լաբորատոր սառնարան (սառցարան) (+ 5 / - 20 °C) | նմուշների ժամանակավոր պահում, ակտիվ միջատների անշարժացում |
| 8. Հանուկով ռեակտիվներ պահելու համար նախատեսված պահարան | քիմիական ռեակտիվների պահում |
| 9. Ընդհանուր նշանակության ինկուբատոր (թերմոստատ չոր օդի)՝ մինչեւ 60 °C պահպանվող ջերմաստիճանով | միջատների աճեցում մինչեւ այն փուլը, որի դեպքում հնարավոր է նույնականացումը |
| 10. Թվային լուսանկարչական ապարատ՝ մանրադիտակների համար ադապտերներով | ֆոտոփաստաթղթերի կազմում, իլյուստրացիոն նյութերի պատրաստում |
| 11. Մաղերի լրակազմ (0,1 մմ - 5,0 մմ) | մաքրելու խոզանակների, հատիկների եւ այլ սորուն նյութերի նմուշների վերլուծություն |

| Մարքավորումների եւ նյութերի անվանումը | Նշանակությունը |
|--|--|
| 12. Ավտոկլավ | նմուշների վարակագրծում |
| 13. Մեղանիկ տաքացնող | միկրոպատրաստուկների չորացում |
| 14. Համակարգիչ՝ լրակազմով | աշխատանքի բոլոր տեսակների փաստաթղթավորում, հաշվետվությունների, տեղեկանքների կազմում, տեղեկատվական բազաների վարում եւ այլն |
| 15. Վառարան ԳԲՀ | փոքր նմուշների վարակագրծում |
| 2. Լաբորատոր սպասք, գործիքներ | |
| 16. Նրբունեղիներ՝ հարթ ծայրերով՝ 15 սմ եւ 25 սմ սրածայր, աչքի՝ 10 սմ փափուկ՝ փոքր միջատների համար | նմուշների՝ փորձաքննության համար նախապատրաստում |
| 17. Հերձադանակներ՝ ոբովայնի աչքի | -" |
| 18. Մկրատներ՝ ուղիղ, տարբեր չափսերի | -" |
| 19. Ասեղներ կտրող | -" |
| 20. Մածկաթիակներ | նմուշների վերլուծություն |
| 21. Էտոց | վնասված եւ միջատների անշարժ տեսակներով ճյուղերի կտրում |
| 22. Վրձնիկներ՝ տարբեր չափսերի | միջատների հավաքում փորձանոթների համար օգտագործում |
| 23. Կալաններ | միկրոպատրաստուկների պահում |
| 24. Տուփեր (պլանշետներ)՝ առարկայական ապակիների համար | նմուշների ուտիլիզացում նմուշների վերլուծություն |
| 25. Փորձաքննությունից հետո թափոնների համար նախատեսված բաքեր | |
| 26. Տախտակներ քանդովի | |
| 27. Միջատաբանական հավաքածուների համար տուփեր | հավաքածուի նյութերի պահում |
| 28. Գրասենյակային պարագաներ (աշխատանքային մատյաններ, գրելու թուղթ, մատիտներ, գրիչներ, սեւաներկ եւ այլն) | փաստաթղթաբանության վարում, միջատաբանական հավաքածուների ձեւակերպում եւ այլն |
| 29. Լաբորատոր սպասք եւ այլ նյութեր (ապակյա, ձենապակյա, պլաստիկ) բանկաներ՝ հարմարեցված խցանով բանկաներ՝ քիմիական ռեակտիվների համար բյուքեր՝ հարմարեցված կափարիչներով, տարբեր ծավալների ձագարներ | Ֆիքսող եւ այլ հեղուկների, միկրոպատրաստուկների պատրաստման, ֆիքսող նյութերի պահման, միջատաբանական հավաքածուների պատրաստման համար փորձաքննություն անցկացնելիս օգտագործում եւ այլն |

| Սարքավորումների եւ նյութերի անվանումը | Նշանակությունը |
|---|--|
| <p>սպիրտի համար տարողություններ կաթոցիչ՝ հարմարեցված կաթոցիկով չափանոթներ կաթոցիկներ բժշկական փորձանոթներ՝ քիմիական, կենսաբանական սպիրտայրոցներ լաբորատոր բաժակներ՝ քիմիական, տարբեր (50 - 1 000 մլ) հալքանոթներ (5 մլ եւ 20 մլ) էքսիկատորներ՝ հարմարեցված կափարիչներով</p> | |
| 3. Սպառման նյութեր | |
| 30. Շեղը՝ սափրելու կամ զսպախցուկային կամ մեկանգամյա օգտագործման հերձադանակ | միկրոպատրաստուկների պատրաստում |
| 31. Ֆիլտրման թուղթ | նմուշների փաթեթավորում |
| 32. Բամբակ | "-" |
| 33. Կոնտեյներներ եւ տոպրակներ | նմուշների պահպանում |
| 34. Գնդասեղներ միջատաբանական | նմուշների հավաքում եւ պահպանում |
| 35. Պիտակի ժապավեն | ժամանակավոր պիտակների համար օգտագործում |
| 36. Փորձանոթներ՝ միկրոցենտրիֆուգալ, կափարիչով, 1,5մլ | նմուշների պատրաստում եւ պահպանում |
| 37. Բաժակներ Պետրի՝ պլաստիկ (տարբեր չափսերի) | նմուշների պահպանում |
| 38. Առարկայական ապակիներ, այդ թվում՝ 1 - 2 փոսիկներով | միկրոպատրաստուկների պատրաստում |
| 39. Պաշտպանական ապակիներ | "-" |
| 40. Ավտոկլավացման համար տոպրակներ | միջավայրի եւ սպասքի նախապատրաստում, մշակված նմուշների եւ սպառման նյութերի ախտահանում |
| 41. Ժամացույցի ապակի | միկրոպատրաստուկների պատրաստում |
| 42. USB ֆլեշ կրիչներ | տեղեկատվության պահպանում եւ հաշվառում |
| 4. Քիմիական ռեակտիվներ | |
| 43. Սպիրտ՝ բժշկական, 96 % | սպիրտի սպառման նորմաներին համապատասխան օգտագործում |
| 44. Հեղուկ Ֆորա-Բերլեգե | միկրոպատրաստուկների պատրաստում |
| 45. Սինթետիկ բալզամ կամ մշտական միկրոպատրաստուկները ֆիքսելու այլ համակարգ | "-" |
| 46. Գլիցերին | "-" |
| 47. Դոնդողանյութ | "-" |
| 48. Կալիումի հիդրօքսիդ | "-" |

| Սարքավորումների եւ նյութերի անվանումը | Նշանակությունը |
|---|--|
| 49. Մառցային քացախաթթու | -"- |
| 50. Կաթնաթթու | -"- |
| 51. Թթու ֆուքսին | -"- |
| 52. Ցելլոզին (անգույն լաք) կամ մշտական միկրոպատրաստուկները ֆիքսելու այլ համակարգ | -"- |
| 53. Պարաֆին | սպիրտավորված նյութերի պահպանում |
| 54. Ֆորմալին | հյութեղ պտուղների, արմատապտուղների ֆիքսում եւ այլն |
| 55. Նատրիումի հիդրօքսիդ (NaOH) | միկրոպատրաստուկների պատրաստում |
| 5. Մեթոդական, տեղեկատվական նյութեր եւ հավաքածուներ | |
| 56. Մեթոդական նյութեր, կազմակերպության ստանդարտներ, ախտորոշման արձանագրություններ | լաբորատոր փորձաքննություններ անցկացնելիս օգտագործում որպես ուղեցույց նյութեր |
| 57. Վնասակար միջատների կարանտինային եւ ոչ կարանտինային տեսակների հավաքածուներ | փորձաքննություն անցկացնելիս օգտագործում որպես համեմատական նյութեր |
| 58. Ցուցիչներ, տեղեկատուներ, առլասներ | փորձաքննություն անցկացնելիս օգտագործում որպես տեղեկատվական նյութ |

II. Մոլախոտաբանական փորձաքննություն

1. Հիմնական սարքավորումները

| | |
|---|--|
| 59. Ձեռքի խոշորացույցների լրակազմ (2 x - 10 x) | ստուգման եւ հետազոտման ընթացքում նյութերի նախնական զննության ժամանակ կիրառում |
| 60. Ճակատի բինոկուլյար խոշորացույց | նմուշների վերլուծություն եւ ստուգում |
| 61. Տարածադիտական մանրադիտակ՝ ընդհանուր խոշորացումը՝ 50 x-ից ոչ պակաս, ֆոտոխցիկի միացման հնարավորությամբ: Օկուլյար միկրոմետրը պարտադիր է | սերմերի եւ պտուղների արտաքին ձեւաբանական հատկանիշների ուսումնասիրություն, միկրոպատրաստուկների պատրաստում |
| 62. Մանրադիտակ՝ կենսաբանական, ուղղահայաց, ընդհանուր խոշորացումը՝ 400 x-ից ոչ պակաս, ֆոտոխցիկի միացման հնարավորությամբ եւ «լուսավոր դաշտ» աշխատանքային ռեժիմով: Օկուլյար միկրոմետրը պարտադիր է | միկրոպատրաստուկների ուսումնասիրություն |
| 63. Օբյեկտ-միկրոմետր | օկուլյար միկրոմետրի բաժանքի արժեքների չափում |
| 64. Կշեռքներ՝ լաբորատոր, էլեկտրական, 5 000 գ-ից ոչ պակաս կշռման սահմանաչափով եւ 0,1 գ-ից ոչ ավելի ընդհատությամբ | նմուշների կշռում |
| 65. Պահարան արտածծող | արծնված եւ փոշոտ նմուշների վերլուծություն, քիմիական ռեակտիվների պահպանում |

| Սարքավորումների եւ նյութերի անվանումը | Նշանակությունը |
|---|---|
| 66. Թվային լուսանկարչական ապարատ՝ մանրադիտակների համար ադապտերներով | Ֆոտոփաստաթղթերի կազմում, իլյուստրացիոն նյութերի պատրաստում |
| 67. Մաղերի լրակազմ (0,1 - 5,0 մմ) | սորուն նյութերի նմուշների վերլուծություն |
| 68. Ավտոկլավ | նմուշների վարակագրծում |
| 69. Հանուկով ռեակտիվներ պահելու համար նախատեսված պահարան | քիմիական ռեակտիվների պահում |
| 70. Համակարգիչ՝ լրակազմով | աշխատանքի բոլոր տեսակների փաստաթղթավորում, հաշվետվությունների, տեղեկանքների կազմում, տեղեկատվական բազաների վարում եւ այլն |

2. Լաբորատոր սպասք, գործիքներ եւ սպառման այլ նյութեր

| | |
|---|---|
| 71. Նրբունեղիներ՝ հարթ ծայրերով (15սմ եւ 25 սմ) | նմուշների՝ փորձաքննության համար նախապատրաստում |
